ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Աբովյան **17/12/2021**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1/1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ

Ավագանու նիստին ներկա էին համայնքի նորընտիր ավագանու 27 անդամներ՝

Էդուարդ Բաբայանը, Արմեն Քոսակյանը, Մետաքսյա Բաբայանը, Դավիթ Զարոյանը, Տիգրան Ղազարյանը, Անի Թենեքեջյանը, Էդվին Կարապետյանը, Սեթրակ Սեթրակյանը, Սեդա Ավետիսյանը, Հասմիկ Խաչատրյանը, Ատոմ Բաղալյանը, Վահե Հարությունյանը, Նորայր Զարգարյանը, Արման Մեղրյանը, Էմիլ Հարությունյանը, Գոռ Գալստյանը, Նազիկ Հարությունյանը, Պավել Ցուգունյանը, Գրիգոր Գուլյանը, Նաիրա Մելիքյանը, Գևորգ Պողոսյանը, Նորայր Միքայելյանը, Մելինե Գասպարյանը, Վլադիմիր Առաքելյանը, Մարգարիտա Հարությունյանը, Նաիրի Հակոբյանը, Տիգրան Գեղամյանը:

Նիստն արձանագրում էր Աշխատակազմի քարտուղար՝ Արուսյակ Առաքելյանը

Ավագանու նիստին ներկա էին նաև ԶԼՄ-ների ներկայացուցիչներ և այլ անձինք

Աշխատակազմի քարտուղար Արուսյակ Առաքելյանը հայտարարեց, որ համայնքի ավագանու 27 անդամները գրանցվել են և համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի՝ մինչև համայնքի ղեկավարի ընտրվելը ավագանու նիստը վարում է ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամ Տիգրան Ղազարյանը:

Աբովյան համայնքի նորընտիր ավագանու տարիքով ավագ անդամ Տիգրան Ղազարյանը հրավիրվեց նիստը վարելու

Տիգրան Ղազարյանը (այսուհետ՝ նիստը վարող) հայտարարեց, որ ավագանու բոլոր անդամները ներկա են, նիստը բացված է և թիվ 29 տարածքային ընտրական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 8 արձանագրությամբ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրությունների արդյունքում Աբովյան համայնքի ավագանու անդամներ են գրանցվել

1. Բաբայան Էդուարդ Վլադիմիրի
2. Քոսակյան Արմեն Սուրենի
3. Բաբայան Մետաքսյա Ալեքսանի
4. Զարոյան Դավիթ Էդիկի
5. Ղազարյան Տիգրան Արմենակի
6. Թենեքեջյան Անի Մկրտիչի
7. Կարապետյան Էդվին Արսենի
8. Սեթրակյան Սեթրակ Արամիկի
9. Ավետիսյան Սեդա Վլադիմիրի
10. Խաչատրյան Հասմիկ Իվանի
11. Բադալյան Ատոմ Միասնիկի
12. Հարությունյան Վահե Արտակի
13. Զարգարյան Նորայր Արսենի
14. Մեղրյան Արման Պետրոսի
15. Հարությունյան Էմիլ Սամվելի
16. Գալստյան Գոռ Լևոնի
17. Հարությունյան Նազիկ Ջիվանի
18. Ցուգունյան Պավել Վլադիմիրի
19. Գուլյան Գրիգոր Արարատի
20. Մելիքյան Նաիրա Ռոմիկի
21. Պողոսյան Գևորգ Նվերի
22. Միքայելյան Նորայր Սերժիկի
23. Գասպարյան Մելինե Դերենիկի
24. Առաքելյան Վլադիմիր Էդվարդի
25. Հարությունյան Մարգարիտա Ռազմիկի

26. Հակոբյան Նաիրի Սամվելի
27. Գեղամյան Տիգրան Գեղամի

Մինչև օրակարգի հարցերի քննարկումը նիստը վարողը տեղեկացրեց, որ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 66-րդ հոդվածի համաձայն՝ ավագանու խմբակցությունները ստեղծվում են նորընտիր ավագանու առաջին նստաշրջանի բացման օրը՝ հետևյալ սկզբունքին համապատասխան. ավագանու անդամների մանդատների բաշխմանը մասնակցած կուսակցության առաջադրմամբ ընտրված ավագանու անդամներն ընդգրկվում են նույնանուն խմբակցություններում:

Քանի որ ավագանու կազմում ընգրվել են չորս կուսակցությունների ցուցակներում ներկայացված անդամներ, հետևաբար Աբովյան համայնքի ավագանու կազմում ստեղծված են համարվում հետևյալ խմբակցությունները՝

1. «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն,
   1) Բաբայան Էդուարդ Վլադիմիրի
   2) Քոսակյան Արմեն Սուրենի
   3) Բաբայան Մետաքսյա Ալեքսանի
   4) Զարոյան Դավիթ Էդիկի
   5) Ղազարյան Տիգրան Արմենակի
   6) Թենեքեջյան Անի Մկրտիչի
   7) Կարապետյան Էդվին Արսենի
   8) Սեթրակյան Սեթրակ Արամիկի
   9) Ավետիսյան Սեդա Վլադիմիրի
   10) Խաչատրյան Հասմիկ Իվանի
   11) Բադալյան Ատոմ Միասնիկի
   12) Հարությունյան Վահե Արտակի
   13) Զարգարյան Նորայր Արսենի
2. «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» խմբակցություն,
   1) Մեղրյան Արման Պետրոսի
3. «Հանրապետություն» խմբակցություն,
   1) Հարությունյան Էմիլ Սամվելի
   2) Գալստյան Գոռ Լևոնի
   3) Հարությունյան Նազիկ Ջիվանի
4. «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն
   1) Ցուգունյան Պավել Վլադիմիրի
   2) Գուլյան Գրիգոր Արարատի
   3) Մելիքյան Նաիրա Ռոմիկի
   4) Պողոսյան Գևորգ Նվերի
   5) Միքայելյան Նորայր Սերժիկի

6) Գասպարյան Մելինե Դերենիկի
7) Առաքելյան Վլադիմիր Էդվարդի
8) Հարությունյան Մարգարիտա Ռազմիկի
9) Հակոբյան Նաիրի Սամվելի
10) Գեղամյան Տիգրան Գեղամի

Առաջարկվեց խմբակցություններին գրավոր ներկայացնել խմբակցության կանոնադրությունը, անվանումը, կազմը, ղեկավարի և քարտուղարի անունները, ազգանունները՝ ավագանու առաջիկա հերթական նիստում համայնքի ղեկավարի կողմից հրապարակելու նպատակով:

Ավագանու անդամների կողմից վերը նշված առաջարկույթյունը ընդունվեց ի գիտություն:

Նիստը վարողը ներկայացրեց Աբովյան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի առաջին նիստի օրակարգային հարցերը՝

1) Համայնքի ղեկավարի ընտրություն.
2) Համայնքի ղեկավարի երդման արարողության կազմակերպչական հարցերի ներկայացում.
3) Ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրվա որոշում:

ԼՍԵՑԻՆ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Տ. Ղազարյան)

Նիստը վարողը ներկայացրեց համայնքի ղեկավարի ընտրության ընթացակարգը.

«Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142.2-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարի ընտրությունն անցկացվում է նորընտիր ավագանու առաջին նիստի ընթացքում: Առաջին նիստն անընդհատ է, բացառությամբ ընդմիջման ու հանգստի համար նախատեսված ժամանակի, մինչև համայնքի ղեկավարի ընտրությունը:

Համայնքի ղեկավարն ընտրվում է բաց քվեարկության միջոցով:

Ավագանու խմբակցությունները կարող են իրենց կուսակցության թեկնածուների ցուցակի առաջին հորիզոնականում տեղ զբաղեցրած անձին առաջադրել որպես համայնքի ղեկավարի թեկնածու, իսկ եթե նա հրաժարվում է, ապա խմբակցությունը կարող է առաջադրել տվյալ կուսակցության թեկնածուների

ցուցակի համապատասխանաբար հաջորդ այն անձին, որը համաձայն է առաջադրվել որպես թեկնածու:

Առաջադրված թեկնածուն կարող է ինքնաբացարկ հայտնել մինչև քվեարկության անցկացումը:

Քվեարկությունն անցկացվում է քվեաթերթիկների միջոցով, որոնցում ընդգրկվում են առաջադրված բոլոր թեկնածուները:

Ավագանու յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

Համայնքի ղեկավարի թեկնածուների առաջադրման հաջորդականությունը որոշվում է ըստ ավագանու ընտրությունների արդյունքներով մանդատներ ստացած կուսակցությունների թվաքանակի՝ փոքրից մեծ:

Առաջարկվեց, որ յուրաքանչուր խմբակցություն առաջադրի համայնքի ղեկավարի իր թեկնածուին կամ հայտարարի խմբակցության կողմից համայնքի ղեկավարի թեկնածու չառաջադնելու մասին:

«Հայ Յեղափոխական Դաշնակցություն» և «Հանրապետություն» խմբակցություններից թեկնածուներ չառաջադրեցին:

Առաջադրվեցին Աբովյան համայնքի ղեկավարի երկու թեկնածու՝

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից՝ Պավել Վլադիմիրի Ցուգունյանը,

«Բարգավաճ Հայաստան» խմբակցության կողմից՝ Էդուարդ Վլադիմիրի Բաբայանը:

Ելույթով հանդես եկան համայնքի ղեկավարի թեկնածուներ Պավել Վլադիմիրի Ցուգունյանը և Էդուարդ Վլադիմիրի Բաբայանը:

Քանի որ համայնքի ղեկավարի քվեարկությունն անցկացվում է քվեաթերթիկների միջոցով, նիստը վարողը ներկայացրեց քվեաթերթիկի օրինակը և հայտարարեց, որ տպագրված է թվով 27 անվանական քվեաթերթիկ, որում ընդգրված են առաջադրված թեկնածուների անուն, ազգանուն, հայրանունը և նշում կատարելու համար վանդակը: Նշումը պետք է կատարվի V նշանի ձևով:

ՍԿՍՎԵՑ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Նիստը վարողը հերթականությամբ հնչեցրեց ավագանու անդամների անունները ըստ թիվ 29 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 8 արձանագրության հերթականության, ավագանու յուրաքանչյուր անդամի տրամադրեց իրենց անվանական քվեաթերթիկները, նրանք կատարեցին իրենց ընտրությունը, ստորագրեցին քվեաթերթիկների վրա, հանձնեցին նիստը վարողին և զբաղեցրին իրենց տեղերը:

Քվեարկության ավարտից հետո նիստը վարողը առաջարկեց յուրաքանչյուր խմբակցությունից մեկական ներկայացուցչի մոտենալ՝ հետևելու քվեարկության արդյունքները հաշվարկելու և ամփոփելու գործընթացին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Պավել Վլադիմիրի Ցուգունյանի օգտին քվեարկել են թվով 12 ավագանու անդամ,

Էդուարդ Վլադիմիրի Բաբայանի օգտին՝ թվով 14 ավագանու անդամ,

ավագանու մեկ անդամ քվեաթերթիկի վրա նշում չի կատարել:

ՈՐՈՇԵՑԻՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայքի ղեկավար ընտրել Էդուարդ Վլադիմիրի Բաբայանին:

ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

Ողջույնի խոսքով հանդես եկավ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայքի ղեկավար Էդուարդ Վլադիմիրի Բաբայանը և զբաղեցրեց նախագահողի տեղը, հրապարակեց օրակարգի 2-րդ հարցը և հայտարարեց, որ այն կզեկուցի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արուսյակ Առաքելյանը.

ԼՍԵՑԻՆ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

(Զեկուցող՝ Ա. Առաքելյան)

Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արուսյակ Առաքելյանը տեղեկացրեց, որ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 74-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարն իր լիազորություններն ստանձնում է իր ընտրվելուց հետո՝ երրորդ օրացուցային օրը, ավագանու՝ օրենքի ուժով հրավիրված նիստում համայնքի բնակիչներին տրված երդմամբ և հայտարարեց, որ Աբովյան համայքի ղեկավար Էդուարդ Վլադիմիրի Բաբայանի երդման արարողությունը տեղի կունենա Աբովյանի համայքապետարևանի նիստերի դալիճում 2021 թվականի դեկտեմբերի 20-ին ժամը 12:00-ին օրենքի ուժով հրավիրված նիստի ժամանակ:

Ավագանու անդամների կողմից վերը նշված տեղեկատվությունն ընդունվեց ի գիտություն:

Էդուարդ Բաբայանը հրապարակեց օրակարգի 3-րդ հարցը և հայտարարեց, որ այն կրկին կզեկուցի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արուսյակ Առաքելյանը.

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ա. Առաքելյան)

Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արուսյակ Առաքելյանը հայտարարեց, որ առաջին նստաշրջանի հերթական նիստում կքննարկվեն ավագանու կանոնակարգը հաստատելու մասին և ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու և դրանց կազմը հաստատելու մասին որոշման նախագծերը, առաջարկեց Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2021 թվականի դեկտեմբերի 29-ը՝ ժամը 14:30:

Էդուարդ Բաբայանը հարցը դրեց քվեարկության՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Կողմ – 24
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

«Հանրապետություն» խմբակցությունը չմասնակցեց քվեարկությանը:

Որոշումն ընդունվեց և նիստը հայտարարվեց ավարտված

Ավագանու անդամներ

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ _____
ԱՐՄԵՆ ՔՈՍԱԿՅԱՆ _____
ՄԵՏԱՔՍՅԱ ԲԱԲԱՅԱՆ _____
ԴԱՎԻԹ ՋԱՐՈՅԱՆ _____
ՏԻԳՐԱՆ ՂԱՋԱՐՅԱՆ _____
ԱՆԻ ԹԵՆԵՔԵՋՅԱՆ _____

ԷԴՎԻՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ _____

ՍԵԹՐԱԿ ՍԵԹՐԱԿՅԱՆ _____

ՍԵԴԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ _____

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ _____

ԱՏՈՄ ԲԱԴԱԼՅԱՆ _____

ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՆՈՐԱՅՐ ԶԱՐԳԱՐՅԱՆ _____

ԱՐՄԱՆ ՄԵՂՐՅԱՆ _____

ԷՄԻԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ԳՈՌ ԳԱԼՍՏՅԱՆ _____

ՆԱԶԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՊԱՎԵԼ ՑՈՒԳՈՒՆՅԱՆ _____

ԳՐԻԳՈՐ ԳՈՒԼՅԱՆ _____

ՆԱԻՐԱ ՄԵԼԻՔՅԱՆ _____

ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ _____

ՆՈՐԱՅՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ _____

ՄԵԼԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆ _____

ՎԼԱԴԻՄԻՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ _____

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՆԱԻՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ _____

ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ _____

Նիստը վարող
ավագանու անդամ՝ ՏԻԳՐԱՆ ՂԱՋԱՐՅԱՆ _____